**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

**2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 9-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ (ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵ-ՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԾՐԱԳԻՐ) ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱ-ՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան                                                                                16 մարտի 2007թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ արդարադատության նախարար Դ. Հարությունյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետի, 101 հոդվածի 1 կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «2007 թվականի մարտի 9-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ընկերակցության միջեւ ֆինանսավորման համաձայնագրում (Դատաիրավական բարեփոխումների երկրորդ ծրագիր) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի դիմումն է՝ մուտքագրված 2007 թվականի մարտի 9-ին:

Լսելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը

եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Համաձայնագիրն ստորագրվել է 2007 թվականի մարտի 9-ին՝ Երեւանում: Ըստ համաձայնագրի՝ Միջազգային զարգացման ընկերակցությունը դատաիրավական բարեփոխումների երկրորդ ծրագրի իրականացման համար Հայաստանի Հանրապետությանը տրամադրելու է տասնհինգ միլիոն երկու հարյուր հազար փոխառության հատուկ իրավունքներին (SDR 15,2 միլիոն) համարժեք վարկ:

Համաձայնագրի բաղկացուցիչ մասն է 2005թ. հուլիսի 1-ի՝ «Միջազգային զարգացման ընկերակցության ընդհանուր դրույթներ վարկերի եւ դրամաշնորհների համար» վերտառությամբ փաստաթուղթը՝ 2006թ. հոկտեմբերի 15-ի փոփոխություններով:

2. Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է պարբերաբար Ընկերակցությանը վճարել պարտավճար՝վարկի չառհանված գումարների դիմաց՝ոչ ավելի, քան տարեկան 0,5 տոկոսի չափով, եւ սպասարկման վարձ՝ վարկի առհանումների դիմաց՝ տարեկան 0,75 տոկոսի չափով: Վարկի հիմնագումարը պետք է մարել կիսամյակային մուծումներով՝ 2017 թվականի ապրիլի 15-ից մինչեւ 2026 թվականի հոկտեմբերի 15-ը:

3. Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է պատշաճ եւ արդյունավետ իրագործել համաձայնագրի 1-ին ներդիրում ամփոփված ծրագրի նպատակները, անհրաժեշտության դեպքում ժամանակին տրամադրել ծրագրի համար պահանջվող միջոցներ, տարածքներ, ծառայություններ եւ այլ ռեսուրսներ, ֆինանսավորել ծրագրի ծախսերի համամասնորեն 22 տոկոսը:

4. Քննության առարկա համաձայնագրով վարկավորվող ծրագրի նպատակներն են՝դատական գործառնությունների եւ ծառայությունների արդյունավետության, արժանահավատության եւ թափանցիկության բարելավման համար ՀՀ դատաիրավական համակարգին անհրաժեշտ վարչարարությամբ, շինություններով եւ ընդլայնված կարողություններով ապահովելը եւ դատական ծառայությունների մասին իրազեկվածության, իրավական ու դատական տեղեկատվության մատչելիության բարելավումը շարունակելն է:

5. Ծրագիրը բաղկացած է 6 բաղադրիչից, որոնք են.

ա) դատական կառավարման եւ վարչարարության ուժեղացում, տեխնիկական աջակցություն Արդարադատության խորհրդին եւ Դատական դեպարտամենտին՝ սարքավորումների ձեռքբերում եւ վերապատրաստում,

բ) դատարանների շենքերի վերականգնում՝ Վճռաբեկ դատարանի եւ Դատական դեպարտամենտի շենքերի կառուցում Երեւանում եւ առաջին ատյանի դատարանների շենքերի կառուցում եւ վերակառուցում,

գ) դատավորների վերապատրաստման դպրոցի եւ Արդարադատության նախարարության ուսումնական կենտրոնի շենքերի վերանորոգում եւ վերակառուցում,

դ) տեխնիկական աջակցություն դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությանը՝ սարքավորումների ձեռքբերում եւ անձնակազմի վերապատրաստում,

ե) Արբիտրաժի ծառայությունների ուժեղացում,

զ) իրավական տեղեկատվության համակարգի կատարելագործում, դատարանների քարտուղարությունների գործավարության բարելավում, հասարակության իրազեկության եւ հանրության ուսուցման գործընթաց, որը ներառում է դատական համակարգի՝ հասարակության հետ կապերի ռազմավարության մշակում, իրավաբանների եւ իրավաբան ուսանողների հետ նպատակային սեմինարների անցկացում, բնակչության շրջանում իրավական տեղեկատվության տարածում եւ օրենսդրության ու դատաիրավական համակարգի մասին հանրության իրազեկվածության մեծացում:

Ծրագրի ավարտի վերջնաժամկետը 2012 թվականի դեկտեմբերի 31-ն է:

6. Դատական համակարգի բարեփոխումներին աջակցություն նախատեսված է եղել նաեւ Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ընկերակցության միջեւ կնքված՝ կառուցվածքային բարեփոխումների տեխնիկական օգնության առաջին եւ երկրորդ վարկային համաձայնագրերով, TACIS-ի 1998թ. ֆինանսավորման հուշագրի AR9801 ծրագրով, 2000թ. հունիսի 21-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ընկերակցության միջեւ «Դատաիրավական բարեփոխումների նախապատրաստման համար» Q225-O AM նամակ-համաձայնագրով, 2000թ. դեկտեմբերի 14-ին Վաշինգտոնում Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ընկերակցության միջեւ ստորագրված ֆինանսավորման համաձայնագրով (Դատաիրավական բարեփոխումների առաջին ծրագիր), ինչպես նաեւ 2006թ. սեպտեմբերի 11-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ընկերակցության միջեւ «Դատաիրավական բարեփոխումների երկրորդ ծրագրի նախապատրաստման համար» Q5380 նամակ-համաձայնագրով:

Ուսումնասիրելով նշված համաձայնագրերի գործադրման իրավակիրառական պրակտիկան, սահմանադրական դատարանը միաժամանակ պարզեց.

ա) TACIS-ի 1998-1999 թթ. գործողությունների ծրագրի շրջանակներում ՀՀ դատական համակարգի ամրապնդման ծրագրի համար հատկացվել է մեկ միլիոն եվրո դրամաշնորհ: Ծրագրի գործընկերն էր ՀՀ դատարանների նախագահների խորհուրդը,

բ) Համաշխարհային բանկի կառուցվածքային բարեփոխումների զարգացման տեխնիկական օգնության առաջին վարկային ծրագրի շրջանակներում դատաիրավական բարեփոխումների բնագավառում իրականացված աշխատանքների համար հատկացվել է 124460 ԱՄՆ դոլար, իսկ երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում դատական համակարգի համար հատկացվել է 208108 ԱՄՆ դոլար,

գ) 2000թ. դեկտեմբերի 14-ին Վաշինգտոնում Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ընկերակցության միջեւ ստորագրված ֆինանսավորման համաձայնագրով (Դատաիրավական բարեփոխումների առաջին ծրագիր) Հայաստանի Հանրապետությանը տրամադրվել է ութ միլիոն վեց հարյուր հազար փոխառության հատուկ իրավունքներին համարժեք (SDR 8,6 միլիոն) վարկ, որով իրականացվել է դատական համակարգի ինստիտուցիոնալ հնարավորությունների ամրապնդում, դատարանների ենթակառուցվածքի վերականգնում (դատարանի մեկ օրինակելի շենքի կառուցում Գյումրիում եւ 6 դատարանների օրինակելի շենքերի վերակառուցում եւ վերանորոգում, ինչպես նաեւ դատարանների 13 ընտրված շենքերի վերանորոգում), դատավորների եւ դատարանների աշխատակազմերի վերապատրաստում, տեխնիկական աջակցություն դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությանը՝ սարքավորումների ձեռքբերում եւ անձնակազմի վերապատրաստում, իրավական տեղեկատվության արդյունավետ տարածման համար ռազմավարության մշակում եւ դատարաններին իրավական տեղեկատվությամբ ապահովում, հասարակության իրազեկության եւ հանրության ուսուցման գործընթաց, ծրագրի իրականացման գրասենյակին սարքավորումների, ուսուցման եւ վարչական օժանդակության տրամադրում եւ պահպանման ծախսերի ֆինանսավորում,

դ) «Դատաիրավական բարեփոխումների երկրորդ ծրագրի նախապատրաստման համար» Q5380 նամակ-համաձայնագրով Միջազգային զարգացման ընկերակցությունը պարտավորվել է մինչեւ 2007թ. մարտի 30-ը Հայաստանի Հանրապետությանը տրամադրել 800.000 ԱՄՆ դոլար՝ Էրեբունի եւ Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի շենքի վերանորոգման, դատավորների վերապատ-

րապման, հարկադիր կատարման ծառայության համար սարքավորումների ձեռքբերման, ԾԻԳ-ի գործառնական ծախսերի եւ այլ նպատակներով:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 2007 թվականի մարտի 9-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ընկերակցության միջեւ ֆինանսավորման համաձայնագրում (Դատաիրավական բարեփոխումների երկրորդ ծրագիր) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ** **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

16 մարտի 2007 թվականի
ՍԴՈ-686